ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 նոյեմբերի 2014թ. թիվ 406-Ա

Ռ.ՄԱՐԴՈՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին կետի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 32, 34 կետերը և հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Սարատովկայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի խորհրդի նախագահի 18.11.2014թ. գրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. «ՀՀ Լոռու մարզի Սարատովկայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ընտրության համար անցկացված մրցույթը համապատասխանում է հաստատության տնօրենի ընտրության կարգի պահանջներին:

2. Ռիմա Շավարշի Մարդոյանին նշանակել «ՀՀ Լոռու մարզի Սարատովկայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով 2014 թվականի նոյեմբերի 19-ից:

3. Ռ.Մարդոյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2014թ. նոյեմբերի 19
ք.Վանաձոր